«Միջազգային էներգետիկ կորպորացիա»
փակ բաժնետիրական ընկերություն
ЗАО «Международная энергетическая корпорация» ♦ "International Energy Corporation" CJSC
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР   ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ   GENERAL DIRECTOR

17.05 2022թ
№ 2/2-030

Երևան 0021, Գ. Ղափանցյան փողոց 2/12
Ул. Гапанцяна 2/12, Ереван 0021, Республика Армения
2/12 G. Ghapantsyan street, 0021 Yerevan, Republic of Armenia
office@mek.am | **www.mek.am**
+374 12 280028

ՀՀ տարածքային կառավարման

և ենթակառուցվածքների նախարի տեղակալ՝

պարոն Հ. Վարդանյանին

Ի պատասխան Ձեր 12.05.2022թ.

№ ՀՎ/22.2/11786-2022 գրության

Հարգելի պարոն Վարդանյան,

Սույն թվականի մայիսի 12-ի Ձեր թիվ ՀՎ/22.2/11786-2022 գրության կապակցությամբ հայտնում ենք, որ համաձայն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից սույն թվականի մարտի 18-ի թիվ 01-ՄՄ-12/217 գրությամբ ներկայացված տեղեկատվության 2021 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնված ջրի 170 մլն. խ.մ. գերազանցող չափաքանակի հաշվին արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքից «ՄԷԿ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) առաջացող գումարի (այսուհետ՝ Լրացուցիչ գումար) չափը կազմել է 212 519 183.419 ՀՀ դրամ:

Ընկերությունը սույն թվականի ապրիլի 27-ի թիվ 2/2-025 գրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տեղեկացրել էր, որ Ընկերության վարկային և այլ պարտավորությունների կատարման ժամանակացույցով պայմանավորված ակնկալվում է, որ Լրացուցիչ գումարը համապատասխան արտաբյուջետային հաշվին կփոխանցվի մինչև տարեվերջ, ինչը համապատասխանում է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 1-ին հոդվածով հաստատված ծրագրի 6-րդ գլխի 6.8-րդ կետով սահմանված ժամկետներին:

Այնուամենայնիվ, չնայած վերոնշյալ հանգամանքին, հայտնում ենք, որ Ընկերությունը կգործադրի բոլոր ջանքերը Լրացուցիչ գումարը համապատասխան արտաբյուջետային հաշվին նախատեսված ժամկետից ավելի շուտ՝ հնարավորության դեպքում մինչև 2022 թվականի առաջին կիսամյակի ավարտը փոխանցելու ուղղությամբ:

Հարգանքով՝ *Ա. Ա. Կիրակոսյան*

Կատարող Ս. Բալասանյան
012 280028 (314)